ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԹԵՄԱ՝ «Համագործակցային մեթոդների կիրառությունը աշակերտների ներգրավվածության և առաջադիմության բարձրացման գործում»

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐ՝ Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հասմիկ Բեյբության

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Արմենուհի Պողոսյան

ԴՊՐՈՑ՝ «Զոլաքարի Ալ.Վարդանյանի անվան թիվ 2 մ/դ»

ՄԱՐՏՈՒՆԻ – 2022թ.

Բովանդակություն

Ներածություն **3**
Գրական ակնարկ **5**
Փորձարարական հետազոտություն **14**
Փորձարարական դաս 1 ..... **15**
Փորձարարական դաս 2 16
Եզրակացություն **18**
Գրականության ցանկ **20**
Հավելված **21**

Ներածություն

Մեր օրերում շատ կարևոր է սովորել մեկ կամ ավելի օտար լեզու և մի շարք բարձրակարգ դպրոցներում, ուսումնական կենտրոններում պահանջվում է իմանալ մի քանի օտար լեզու:

Օտար լեզուների կարևորությունը քննարկման կարիք չունի: Դրանք հնարավորություն են տալիս բացահայտելու նոր մշակույթներ և բացում են դեպի այլ երկրներ տանող դռները: Լեզուները թույլ են տալիս նաև ավելի լավ ըմբռնելու մեր սեփական մշակութային ինքնությունը և գիտակցել ազգերի միջև եղած տարբերությունները: Նրանք նպաստում են միջազգային փոխհարաբերություններին: Դրանք նաև նպաստում են որոշակի աշխատանքային դիրքի հասնելուն: Ի վերջո, մեկ կամ ավելի լեզուների իմացումը բավարարվածություն է և անձի հարստացման աղբյուր:

Օտար լեզուն, որպես ուսումնական առարկա, նպաստում է սովորողների ընդհանուր կրթությանը,զարգացնում նրանց ճանաչողական կարողությունները, խոսքն ու մտածողությունը: Սովորելով օտար լեզուն՝ դպրոցականները նախնական պատկերացումներ են ձեռք բերում տվյալ լեզվի մասին, ըմբռնում որոշ առանձնահատկություններ, որոնցով այն տարբերվում է մայրենի լեզվից, ինչը նպաստում է սովորողների ինչպես բանասիրական մտահորիզոնի ընդլայնմանը, այնպես էլ մայրենի լեզուն ավելի լավ հասկանալուն:

Օտար լեզուները ընդլայնում են սովորողի աշխարհայացքը, նպաստում է հաղորդակցման և հանրամշակույթային կարողությունների ձևավորմանը, լեզվական նորմերի ընկալմանը և գիտակցմանը, ինչպես նաև աջակցում են սովորողների ընդհանուր խոսքային կարողությունների զարգացմանը: Այս ամենը նպաստում է դպրոցականների լեզվաբանական կրթության հիմունքների ձևավորմանը:

Ժամանակակից աշխարհի հիմնական միտումն ինտեգրացման ձգտումն է: Ռուսաց լեզուն ԱՊՀ մասնակից պետությունների ժողովուրդների միջև հաղորդակցության միջոց է և ՄԱԿ-ի աշխատանքային լեզուն: Ռուսաց լեզվի ուսուցման ինտենսիվացման արդիականությունը նշված է Եվրախորհրդի նյութերում. «Ժամանակն է վերականգնել և կենդանացնել ռուսաց լեզվի ուսուցումը և ուսումնասիրությունը ոչ միայն Ռուսաստանում և հարևան երկրներում, այլև Եվրախորհրդի բոլոր անդամ երկրներում»՝ Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և ԱՊՀ մասնակից պետությունների միջև քաղաքական,

տնտեսական և մշակութային կապերի ընդլայնումը բարձրացնում է ռուսաց լեզվի ինտեգրացման դերը[1]:

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել համագործակցային ուսուցման մեթոդների կարևորությունը և դրանց կիրառությունը աշակերտների ներգրավվածության և առաջադիմության բարձրացման գործում: Նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

1. Ուսումնասիրել համագործակցային ուսուցման տեսության զարգացումը և գործնական կիրառությունը դասապրոցեսի ընթացքում:
2. Կիրառել համագործակցային մեթոդները և պարզել արդյունքները:

[1] http://www.irtek.am/views/act.aspx?aid=8359 (25.07.2022)

Գրական ակնարկ

Աշխարհը փոխվում է արագընթաց տեմպերով և անկանխատեսելիորեն: Տեղեկատվությունն ու գիտելիքները ձևավորում են մեր աշխարհայացքը: Այն ինչ մի ժամանակ թվում էր հավերժական ու անփոփոխ, այսօր միայն հարաբերական է կամ նույնիսկ ամբողջությամբ՝ սխալ:

Կրթության ոլորտի աշխատողները ամենուրեք գիտակցում են, որ դասավանդման և ուսուցման հնացված ձևերը այլևս անկարող են ստեղծել ու զարգացնել գիտելիքներ ու հմտություններ, որոնք անհրաժեշտ են քաղաքացուն գիտելիքների տնտեսության մեջ բարեկեցիկ կյանքով ապրելու համար: Հետրաբար ինչպես Հայաստանում, այնպես էլ ամենուրեք, դպրոցում անհրաժեշտ են դասավանդման և ուսուցման այլընտրանքային նոր մոտեցումներ:

Դասավանդման խնդիրների լուծման նպատակով համագործակցային ուսուցումը ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներից մեկն է: Չնայած իր տարածմանը ուսուցիչների շրջանում և երկարատև պատմությունը, այն չի գտել լայն կիրառում: Դրա պատճառն ամենևին սովորողների առաջընթացի և ընդհանուր զարգացման վրա համագործակցային ուսուցման դրական ազդեցության վկայությունների բացակայությունը չէ:Իրականում, համագործակցային ուսուցումը ժամանակակիրց կրթության, դասավանդման և ուսուցման ամենաշատ ուսումնասիրված ոլորտներից մեկն է: Կարճ ասած՝ գիտելիքների հասարակությունում անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ուսուցման վերաբերող հետազոտությունների արձագանքները բավական խոստումնալից են:

Խիստ կարևոր է իրարից տարբերել ավանդական խմբային աշխատանքը և համագործակցային ուսուցումը: ՈՒսուցիչներից շատերն են դասավանդման ընթացքում կիրառում խմբային աշխատանքը, սակայն քչերն ունեն ուսուցման գործընթացում համագործակցային ուսուցման հիմնական տարրերն ու մեթոդները ինտեգրելու համար անհրաժեշտ վարպետություն: Հենց այդ պատճառով, համագործակցային ուսուցումը քիչ է կիրառվում դասարանում և դպրոցում կիրառվող փոքր խմբերով աշխատանքները ավելի շատ խմբային աշխատանքներ են , քան համագործակցային ուսուցում: Համագործակցային ուսուցման կիրառումը սովորելը ժամանակատար գործընթաց է: մեկ աշխատանքային հանդիպումը կամ սեմինարը դռևս բավարար չէ: ՈՒսուցիչներից պահանջվում է մեկ կամ երկամյա մասնագիտական վերապատրաստում և ուսուցում: Այդ ժամանակահատվածում չափազանց կարևոր է դասարանում պարբերաբար կիրառել ուսուցման հնտությունները, ուսոմնասիրել համագործակցային ուսուցման վերաբերյալ գրականություն, ինչպե նաև համագործակցել նմանատիպ գործընթացներում ներգրավված ուսուցիչների հետ:

Հայաստանի դպրոցներն ի տաբերություն այլ երկրների դպրոցների ավելի շատ հիշեցնում են ուսուցիչների և սովորողների ավանդական համայնքներ: Ուստի համագործակցային ուսուցումը Հայաստանում ունի ներդրման ու զարգացման համար անհրաժեշտ հիմք և բարենպաստ պայմաններ:

Համագործակցային ուսման կազմակերպումը

Համագործակցային մանկավարժության նպատակն այնպիսի մեթոդների կիրառումն է, որոնք ուսման գործընթացը վերածում են սոցիալական շփման: Հիմնական իմաստն աշակերտների՝ որպես գործընկերների խմբի համագործակցությունն է: Գոյություն ունեն համագործակցային կրթության և ուսուցման բազմաթիվ մեթոդներ (նախագծերի մեթոդը, քննարկումը, խնդիրների լուծման վրա հիմնված և դիտարկման միջոցով իրականացվող ուսումը և այլն): Այս մեթոդներից յուրաքանչյուրի համար գոյություն ունեն համատեղ աշխատանքի տարատեսակ եղանակներ, վարժություններ և առաջարկություններ: Համագործակցային մեկ ճիշտ մեթոդ գոյություն չունի, սակայն կա համագործակցային մի քանի եղանակ, և ավելին՝ ներկայումս գոյություն ունեն հարյուրավոր վարժություններ և կազմակերպման եղանակներ: Հետևաբար, ուսուցիչները կարող են այս կամ այն մեթոդը որդեգրելու փոխարեն ընտրել տվյալ մանկավարժական իրավիճակին համապատասխանող լուծում, իսկ այլ իրավիճակում՝ կիրառել այլ լուծումներ:

1.Համագործակցային ուսուցման տեխնոլոգիա՝

- անձի զարգացում և անհատականության ձևավորում.
- հոգեբանական և ֆիզիկական առողջության ապահովում.
- սթրեսի հաղթահարում.
- առողջ փոխհարաբերությունների դրսևորում:

2. Համագործակցային ուսուցման տարրերը (Տե՛ս գծապատկեր 1-ում):



Գծապատկեր 1. Համագործակցային ուսուցման տարրերը:

- Դրական փոխկապվածության ապահովում: Խմբում ձևավորվում է միմյանց օգնելու , աջակցելու, խրախուսելու մթնոլորտ: Սովորողի ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն: Այն նպաստում է հանդուրժողականության և վստահության ձևավորմանը:
- Դեմ առ դեմ խթանող փոխազդեցություն: Խմբի անդամները համագործակցում են փոխանակում տեղեկություններ , կարծիքներ և ռեսուրսներ, մշակում և վերլուծում են քաջալերում և աջակցում են միմյանց ընդհանուր նպատակին հասնելու համար:
- Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն: Խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու, իր գաղափարով և մտքերով կիսվել մյուս անդամների հետ:
- Միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտություններ: Խմբի անդամների միջև ձևավորվում են վարքագծային նորմեր, անաղմուկ աշխատանք, խոսողին հետևելը, ներկայություն մինչև ավարտը:
- Խմբային գործընթացի մշակում: Խմբի անդամների հաջողությունների , փոխհարաբերությունների համագործակցության բարելավման հետ կապված խնդիրների քննարկման փուլ է:

- ❖ Փոխներգործուն կամ ինտերակտիվ առաջադրանքի կատարում: Այս կետի կարևոր չափանիշը այն է, որ խմբի անդամները հեշտությամբ մասնակցեն առաջադրանքի կատարմանը:

2. Համագործակցային տեխնոլոգիայում կիրառվող մեթոդները և հնարները

- Թիմային առաջադիմություն
- Խճանկար
- Պատկերասրահում
- Խմբային հետազոտություն

Խնդիրների լուծման վրա հիմնված ուսումը

Բացի գիտելիք փոխանցելուց, այս եղանակը նպատակ է հետապնդում զարգացնել աշակերտի՝ խնդիրներ լուծելու և համագործակցելու կարողությունները: Խնդիրների լուծման վրա հիմնված ուսման դեպքում աշակերտը պետք է ինքնուրույն հետազոտություն իրականացնի, կարողանա ըմբռնել խնդրի էությունը, ինչպես նաև ունենա SS ոլորտում որոշ գիտելիքներ. ուսման այս մեթոդի նպատակներից է նաև նշված կարողությունների զարգացումը: Այս դեպքում ուսուցիչը կատարում է համակարգողի կամ խորհրդատուի դեր: Խնդիրների լուծման վրա հիմնված ուսուցումն աշակերտներին սովորեցնում է, թե ինչպես է պետք սովորել: Աշակերտները սովորում են խմբի անդամների հետ համագործակցությամբ՝ լուծումներ գտնելով իրական կյանքից վերցված խնդիրների համար: Միաժամանակ նրանք սովորում են, թե ինչպես առավելագույնս արդյունավետ համակարգեն իրենց ուսման գործընթացը: Այս մեթոդի հիմնական իմաստն այն է, որ աշակերտի կարողություններն օգտագործվում են ոչ թե պատրաստի գիտելիք տրամադրելու, այլ գիտելիք քաղելու նպատակով: Այն դասարաններում, որտեղ աշակերտներն այս մեթոդն են կիրառում, նրանք հասկանում են, թե ինչպես է ուսումը դառնում գիտելիքի որոնման գործընթաց: Աշակերտների մոտ ձևավորվում է քննադատական մտածելակերպ, որն իրենց հնարավորություն է տալիս ձեռք բերվող տեղեկությունները փոխկապակցել այն նպատակի հետ, որի իրականացման համար կարող են օգտագործվել այդ տեղեկությունները: Խնդիրների լուծման և ուսման գործընթացի հաջողությունը կախված է աշակերտների դպրոցական և արտադպրոցական արդյունավետ աշխատանքից: Առաջադրանքների խմբային

կատարումը խնայում է ժամանակը և զարգացնում է խմբի անդամների շփման և բանավոր խոսքի կարողությունները[2]:

Խնդիրների լուծման վրա հիմնված ուսումը նորարարական մեթոդ է, որի դեպքում օգտագործվում են նոր նյութը լուծում պահանջող խնդրի տեսքով ներկայացման մանկավարժական կառուցողական մեթոդներ:

Այս մեթոդի կիրառման հիմնական քայլերն են՝

- առաջադրանքի սահմանումը,
- տեղեկությունների որոնման տարատեսակ ռազմավարությունները,
- տվյալներ և տեղեկություններ ստանալու մատչելիությունը (որտեղ),
- տեղեկությունների օգտագործումը և խնդիրների լուծումը,
- սինթեզը,
- գնահատումը:

Համագործակցային քննարկում

Համագործակցային քննարկումը աշակերտների հաղորդակցման և ճարտասանական կարողությունները զարգացնելու լավ եղանակ է: Քննարկման ընթացքում բոլոր մասնակիցները հնարավորություն ունեն խոսելու (պայմանով, որ սահմանված կանոնները պահպանվում են):

Այս եղանակի փուլերն են՝

1) քննարկումը վարողն առարկայի վերաբերյալ հակասական հայտարարություններ է անում:Այդ հայտարարությունները փակցված են սենյակի տարբեր մասերում.
2) յուրաքանչյուր աշակերտ, ըստ իր կարծիքի/ընկալման, կանգնում է այդ հայտարարություններից մեկի մոտ.
3) քննարկման համար խմբեր ձևավորելուց հետո վարողը ժամանակ է սահմանում հնչեցված հայտարարությանը կողմ փաստարկները ներկայացնելու համար.
4) փաստարկները պատրաստելուց հետո յուրաքանչյուր խումբ ընտրում է իր խոսնակին.

[2] Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայա- թյան Ն., Ալեքսանյան Լ.,Պուրուկուրու Վ., Համագործակցային ուսուցում, Երևան, «Անտարես» հրատ., 2006, 123 էջ:

5) խոսնակները նստում են սեղանի շուրջ և ստանում այսպես կոչված «քննարկման խաղանիշեր» (3-6 հատ՝ կախված քննարկման համար սահմանված ժամանակահատվածից և մասնակիցների թվից):
6) խմբի անդամները շարվում են իրենց խոսնակի հետևից և նույնպես խաղանիշեր են ստանում: Խաղանիշերն օգտագործվում են հետևում կանգնած աշակերտներին քննարկման մեջ ներգրավվելու նպատակով: Որպես այլընտրանք, խմբի անդամներն իրենց խաղանիշերը կարող են տալ իրենց խոսնակին, եթե վերջինս սպառել է իր բոլոր խաղանիշերը, սակայն դեռևս ներկայացնելու փաստարկներ ունի.
7) Իր փաստարկներից յուրաքանչյուրը ներկայացնելիս խոսնակն իր խաղանիշերից մեկը դնում է սեղանի կենտրոնում: Խաղանիշերը որոշում են ելույթների թիվը: Մեկ փաստարկի գինը մեկ խաղանիշ է: Այս եղանակն օգտագործելով՝ ուսուցիչը ոչ միայն կառավարում է քննարկման ժամանակը, այլև աշակերտներին սովորեցնում է իրենց փաստարկները ձևակերպել հստակ և հակիրճ:

Փոքր խմբերով աշխատելու առավելությունները:

Համագործակցային ուսուցման ընթացքում շատ կարևոր է խմբերի մեծությունը: Առավել արդյունավետ են համարվում 4-5 հոգուց բաղկացած խմբերը: Այդպիսի խմբերում աշակերտները առավել մեծ ակտիվություն դրսևորելու հնարավորություն ունեն: Չորս հոգանոց խմբերում կարևորվում է յուրաքանչյուր աշակերտի անհատական պատասխանատվությունը և միաժամանակ ձևավորվում է կոլեկտիվ աշխատանքի մթնոլորտ: Խմբի մեծությունը կախված է դասի նպատակից և ընտրված մեթոդից:

Փոքր խմբերով աշխատանքը էապես մեծացնում է աշակերտի ակտիվությունը դասապրոցեսում: Ակնհայտ է , որ հնարավոր չէ արդյունավետ սովորել միայն դիտողի, լսողի, պասիվ վիճակում գտնվելով:: Աշակերտն ավելի լավ է սովորում, երբ ակտիվ մասնակցում է գործընթացին:

Փոքր խմբերով ուսուցումը կարևորվում է նաև այն առումով, որ դասարաններում աշակերտների խտության մեծացման արդյունքում զգալիորեն դժվարանում է ուսուցման ֆրոնտալ անհատական հարցման ձևերի կիրառումը:Երբ ուսուցիչն աշխատում է դասարան (մեծ) խմբի հետ, ապա աշակերտները

արտահայտվելու, քննարկելու ավելի քիչ հնարավորություններ են ունենում: Փոքր խմբի պարագայում այդ հնարավորությունները շատ ավելի մեծ են:

Փոքր խմբերով ուսուցումը ունի հետևյալ նպատակները .

- զարգացնում է խնդիրներ լուծելու կարողություն,
- ձևավորում է հաղորդակցման հմտություն,
- աշակերտները սովորում են միմյանցից,
- զարգանում է աշակերտների պատասխանատվության զգացումը,
- միմյանց հաշվետու լինելու հատկությունը՝ խմբի ընդհանուր հաջողությունն ապահովելու հարցում,
- խթանում է թիմային աշխատանքը,
- ապահով և նպաստավոր միջավայր է ստեղծում գիտելիքներն ու հմտությունները դրսևորելու համար,
- քննարկումների միջոցով ամրապնդվում է աշակերտների համոզմունքները,
- ընձեռում է ակտիվ մասնակցություն և ինքնադրսևորման հնարավորություն:

Վերջին տարիներին հաճախ են հակադրում ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդները, ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումները: Ընդ որում՝ այդ հակադրումը կատարվում է այն համատեքստում, որ ինտերակտիվ և աշակերտակենտրոն մոտեցումները բացարձակապես լավն են, իսկ ավանդական և ուսուցչակենտրոն մոտեցումները՝ վատը: Այս մոտեցումը գիտականորեն հիմնավորված չէ[3]:

Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը: Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար: Բացի այդ՝ ինտերակտիվ ուսուցումն ունի որոշակի ռիսկեր, որոնք անտեսել չի կարելի: Օրինակ՝ խմբային աշխատանքների ժամանակ որոշ աշակերտներ «գլուխ են պահում»: Արտաքուստ թվում է, թե երեխաներն ակտիվ են, բայց վերջում պարզվում է, որ մնացորդային գիտելիքների մակարդակը ցածր է: Հետևաբար՝ նոր մանկավարժության մեջ չպետք

[3] Վարդումյան Ս., Ջաղինյան Ն., Հարությունյան Լ., Գարի Վարելլա, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, «Նոյյան տապան» հրատ., 2005, 402 էջ:

է լինեն մեթոդների և հնարների հակադրում: Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել:

Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս: Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին: Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան:

Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է: Մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել: Հետևաբար՝ ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը:

Գիտեմ, ուզում եմ իմանալ, սովորեցի (ԳՈՒՍ)

Դասը սկսելու շատ հայտնի հնար է ԳՈՒՍ-ը (Տե՛ս գծապատկեր 2-ը): Դասասկզբում ուսուցիչը գծում է Մ-աձև աղյուսակ, որի ձախ սյունակում գրում է՝ գիտեմ, կենտրոնում՝ ուզում եմ իմանալ, աջ սյունակում՝ սովորեցի բառերը: Դասի թեման հայտնելուց հետո ուսուցիչը դիմում է աշակերտներին հետևյալ հարցով. ի՞նչ գիտեք այս թեմայի, հասկացության մասին: Ապա լրացվում է գիտեմ սյունակը: Հաջորդիվ աշակերտներին հարցնում է՝ ի՞նչ եք ուզում իմանալ այդ թեմայի մասին: Եվ լրացնում է ուզում եմ իմանալ սյունակը: Դասի վերջում լրացվում է սովորեցի սյունակը[4]:

[4] Խաչատրյան Ս. – Ուսուցման արդյունավետ հնարներ.- Եր.: Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020.- 74 էջ:



Գծապատկեր 2. ԳՈՒՍ մեթոդը

Մտագրոհ

Դասի մասնակցային սկիզբ ապահովող լավագույն մեթոդներից մեկը մտագրոհն է: Մտագրոհի միջոցով ուսուցիչը դասարանից հավաքում է մտքեր տվյալ թեմայի վերաբերյալ: Ընդ որում՝ մտագրոհի ժամանակ կարևոր է մտքերի քանակը: Կարևոր է նաև, որ աշակերտները առանց երկար մտածելու պատասխանեն ուսուցչի հարցին, որպեսզի ուսուցչի համար պարզ դառնան նաև այն սխալ պատկերացումները, որոնք թեմայի վերաբերյալ ունեն աշակերտները: Վերջին տարիներին մասնագետները մտահոգություն են հայտնել մտագրոհի հետ կապված: Բանն այն է, որ դասերի ժամանակ ակտիվ աշակերտները մենաշնորհում են մտագրոհը: Դանդաղ մտածող, ոչ ակտիվ աշակերտները կարող են դուրս մնալ մտագրոհից: Դրա համար առաջարկվում է օգտագործել նաև մտագրոհի գրավոր տարբերակը: Ուսուցիչն աշակերտներին առաջարկում է թղթի վրա գրել իրենց մտքերը և հանձնել իրեն: Այս մոտեցումը չի փոխարինում բանավոր մտագրոհին: Պարզապես լրացնում է այն:

Փորձարարական հետազոտություն

Այս հետազոտական աշխատանքն իրականացնելու համար ընտրել եմ Զոլաքարի Ալ. Վարդանյանի անվան համար 2 միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանը: Հետազոտական աշխատանքի նպատակն է՝ ներկայացնել համագործակցային մեթոդների ռազմավարությունները, որոնք կիրառվում են սովորողների գիտելիքները գնահատելու, ուսուցանվող նյութն ավելի խորն ըմբռնելու, քննադատական մտածողություն զարգացնելու, աշակերտների ներգրավվածության աստիճանը բարձրացնելու, մոտիվացիան խթանելու համար: Ավելին, ճիշտ և դասի նպատակներից բխող հարցերի առաջադրումը կարող է հիմք հանդիսանալ նոր գաղափարների առաջացման, ավելի խորքային ուսումնասիրությունների համար: Ուսուցման արդյունավետության և սովորողների ներգրավածության բարձրացման համար հետազոտված փորձարարական դասերի ընթացքում կիրառել եմ համագործակցային մեթոդներ:

Ինտերակտիվ մեթոդներով աշակերտները ավելի հեշտ են ընկալում նյութը և կատարում համապատասխան առաջադրանքը ի տարբերություն նյութի բովանդակային վերարտադրմանը: Դասերի ընթացքում կիրառել եմ հետևյալ մեթոդները՝ ԳՈՒՍ, մտագրոհ, քարտեզագրում, Տ-աձև աղյուսակ, ՓԳՀ-նշանների համակարգ:

Փորձարարական դասարանի նկարագիր

Փորձարարական դասեր իրականացնելու համար ընտրված 7-րդ դասարանում դասավանդում եմ ռուսաց լեզու և գրականություն առարկան արդեն 6 տարի: Դասարանը ռուսաց լեզվի ժամին կիսվում է: Իմ խմբում կան 17 աշակերտներ՝ 12 տղա 5 աղջիկ: Ընդհանուր առմամբ միջին և գերազանց կարողությունների տեր աշակերտներ են: Դասարանում չկան կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներ. ուսուցման և ընկալման դժվարություններ ևս:

Փորձարարական դաս 1.

Հետազոտությունը իրականացնելու համար առաջին ընտրված դասի թեման է «Իմ Հայաստանը. Հայաստանի բանալիները» (Армения моя. Ключи от Армении.)՝ ռուս գրականությունից:

Այս թեմայի ուսումնասիրման համար իմ առջև դրել եմ հետևյալ նպատակները՝

- Աշակերտները գաղափար կազմեն տվյալ թեմայի մասին,
- Ծանոթանան Հայաստանի մշակութային արժեքներին և պատմամշակութային կոթողներին:
- Պատասխանեն այն հարցին, թե ինչու է Հայաստանը իրենց համար հարազատ
- Կարդան և կարողանան ինքնուրույն թարգմանել տեքստը, պատասխանեն թեմայում առկա հարցերին,
- Կազմեն թիմային հարցեր թեմայի վերաբրյալ և հարց տալ մյուս թիմերին,
- Գործնական աշխատանք.հանձնարարել յուրաքանչյուր խմբին հավաքագրել փաստեր և նոր տեղեկատվություն թեմայի վերաբերյալ և ներկայացնել տեսասահիկի միջոցով:

Այս ամենից ակնկալում եմ, որ աշակերտները՝

- Կարողանան հասկանալ նոր բառերը և արտահայտությունները,
- Կարողանան վերլուծել նոր հասկացությունները,
- Կարողանան վարժ ընթերցել, ճիշտ շեշտադրումով բառերը արտահայտել,
- Կարողանան ինքնուրույն վերարտադրել տեքստը միայն ռուսերեն,
- Կարողանան ինքնուրույն պատասխանել հարցերին և կազմել այլ հարցեր նոր ձեռքբերած բառապաշարի հիման վրա:

Դասը սկսել ենք մտագրոհ մեթոդի կիրառմամբ՝ աշակերտները թղթերի վրա նշել են իրենց մտքերը (յուրաքանչյուրը նվազագույնը 4 միտք) և ներկայացրել են: Արդյունքում ունենցել ենք թեմայի շրջանակներոում բազմաբովանդակ քննարկում

Թեման հեշտ ընկալվող էր և հետաքրքիր: Դասի ընթացքում աշակերտները բաժանվեցին խմբերի (4 խումբ) և թեմայի համապատասխան բաժինը յուրացրին

դասարանում: Յուրաքանչյուր խմբին տրվեցին առաջադրանքներ, որոնց կատարմանը մասնակցեցին բոլորը: Աշակերտները պատասխանեցին և ընթանրացրին իրենց տեսակետները թեմայի վերաբերյալ: Ամփոփելուց հետո սկսեցինք աշխատել գրատախտակի մոտ փակցրած նկարների միջոցով ներկայացնելով Հայաստանի տեսարժան վայրերը և մշակութային արժեքները: Դասը քննարկելուց հետո գրատախտակին գրվեցին մի քանի արժեքներ արտահայտող բառեր:

Ընդհանուր առմամբ դասն անցավ բավական հետաքրքրված՝ դա էին փաստում աշակերտների ներգրավվածությունը դասապրոցեսին: Դասի ավարտին կատարեցի գնահատում և տնային հանձնարարություն տվեցի:

Փորձարարական դաս 2.

Հետազոտությունը իրականացնելու համար երկրորդ ընտրված դասի թեման ռուսաց լեզվից «Բառի ուղիղ և փոխաբերական իմաստները» (Прямое и переносное значение слова) է:

Այս թեմայի ուսումնասիրման համար իմ առջև դրել եմ հետևյալ նպատակները՝

- Աշակերտները գաղափար կազմեն տվյալ թեմայի մասին,
- Կարողանան տարբերակել բառի ուղիղ և փոխաբերական իմաստները,
- Կարողանան նախադասությունների մեջ օգտագործել նմանատիպ բառեր և բառակապակցություններ,
- Կազմեն թիմային հարցեր թեմայի վերաբրյալ և հարց տալ մյուս թիմերին,
- Գործնական աշխատանք. հանձնարարել յուրաքանչյուր զույգին տեքստից դուրս հանել ուղիղ և փոխաբերական իմաստ ունեցող բառերը և գործածել նախադասությունների մեջ:

Այս ամենից ակնկալում եմ, որ աշակերտները՝

- Կարողանան հասկանալ նոր բառերը և արտահայտությունները,
- Կարողանան վերլուծել նոր հասկացությունները

- Կարողանան ճիշտ գործածել նմանատիպ բառերը՝ նախադասության կամ խոսքի մեջ,
- Կարողանան ինքնուրույն պատասխանել հարցերին և կազմել այլ հարցեր նոր ձեռքբերած բառապաշարի հիման վրա:

Դասը սկսել ենք ԳՈՒՍ մեթոդի կիրառմամբ՝ աշակերտները աշխատանքային տետրերում առաջին փուլում նշել են, թե ինչ գիտեին, հետո ինչ են ուզում սովորել և թեմայի ուսումնասիրությունից հետո՝ ինչ սովորեցին:

Նոր նյութի մատուցման փուլում շատ կարևոր է նաև արդեն իմացածի հետ կապակցումը: Մարդը սովորում է այն դեպքում, երբ կարողանում է նոր գիտելիքը կապակցել արդեն իմացածի հետ: Հետևաբար՝ նոր նյութը պետք է անընդհատ կապակցել նախկինում ուսումնասիրված նյութի հետ:

Նոր նյութը բացատրելիս կարևոր է «սատանայի վկա» հնարի հաճախակի կիրառումը: Այս դեպքում ուսուցիչը միտումնավոր սխալ միտք է ասում, որպեսզի ստուգի, թե որքան ուշադիր է դասարանն իրեն լսում: Իհարկե, սխալը պետք է լինի աշակերտների արդեն իմացած նյութի շրջանակում[5]:

Հաճախ ուսուցիչներին թվում է, թե այդ դեպքում աշակերտները կարող են մտածել, որ իրենց ուսուցիչը չի տիրապետում նյութին և սխալ բաներ է ասում:

Բայց մի քանի անգամ կիրառելուց հետո աշակերտները կհասկանան, որ դա մանկավարժական հնար է: «Սատանայի վկա» հնարի կիրառումը աշակերտների ուշադրությունը կենտրոնացնելու լավ մեթոդ է:

Երկրորդ փորձարարական դասի ընդացքում ևս աշակերտները բաժանվել են խմբերի (զույգերի) և կատարել են առաջադրանքները, որոնք ներկայացվել են գրատախտակին նշումներ կատարելով: Դասը ավարտեցինք ռեֆլեքսիայի միջոցով, կատարեցի գնահատում և հանձնարարեցի տնային աշխատանք՝ աշակերտներին բաժանեցի փոքր տեքստեր: Աշակերտները պետք է ընդգծեն ուղիղ և փոխաբերական իմաստով բառերը և դրանցով կազմեն նախադասություններ:

[5] https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf (26.07.2022)

Եզրակացություն

Փորձարարական հետազոտություն իրականացնելու ընթացքում, առաջին դասի ժամանակ միջին առաջիդումություն ունեցող աշակերտները դժվարանում և կաշկանդվում էին դասին մասնակցությունից, բայց 2-րդ դասի ընթացքում ավելի ներգրավվեցին դասապրոցեսին և ակտիվ մասնակցեցին խմբային աշխատանքին:

Առաջին դասին աշակերտների կաշկանդվածությունը նկատելով կիրառել եմ դասի ոչ ավանդական ձևերը՝ մտագրոհ, խմբային հետազոտություն, նրանց ստեղծագործական կարողությունները, երևակայությունը, կապակցված խոսք կազմելու, վերարտադրելու կարողությունները զարգացնելու համար:

Երկրորդ դասի ընթացքում կիրառել եմ ԳՈՒՍ և խմբային հետազոտություն մեթոդները, ինչպես նաև «սատանայի վկա» հնարը: Նոր նյութը բացատրելիս կարևոր է «սատանայի վկա» հնարի հաճախակի կիրառումը: Այս դեպքում ուսուցիչը միտումնավոր սխալ միտք է ասում, որպեսզի ստուգի, թե որքան ուշադիր է դասարանն իրեն լսում: Իհարկե, սխալը պետք է լինի աշակերտների արդեն իմացած նյութի շրջանակում:

Յուրաքնչյուր դասից հետո աշակերտների մոտ նկատվել են ակտիվություն, ինքնուրույն դրսևորվելու առաջընթաց, նրանք սկսեցին ավելի ազատ շարադրել իրենց մտքերը: Կարողացան հեշտությամբ աշխատել բնագրի հետ: Գործնական աշխատանքի շնորհիվ նրանց մոտ ձևավորվել է կապակցված խոսք կազմելու, վերարտադրելու կարողություններ: Աշակերտների համար մեծ հետաքրքրություն և ակտիվություն առաջացրեց տեսասահիկների միջոցով նոր փաստեր ներկայացնելը: Արդյունքներից պարզ է դառնում, որ դասի ընթացքում նմանատիպ մեթոդների կիրառումը ոգևորում և մեծ մոտիվացիա է փոխանցում բոլոր աշակերտներին և նրանք ավելի մեծ սիրով են սովորում:

Տեսական վերլուծությունից և փորձարարական հետազոտության արդյունքների ամփոփից՝ հանգել եմ հետևյալ եզրակացությանը. Ցանկացած առարկայի շրջանակներում մեծ խնդիր է դպրոցահասակ երեխաների մոտ զարգացնել ինքնուրույն գործելու կարողությունը, վերլուծելու, ստեղծագործելու ունակությունը, որպեսզի նա ունենա ուրույն մտածողություն, վառ երևակայություն, ինքնազարգացման ու առաջընթացի մեծ ձգտում: Ժամանակակից մեթոդները մեզ հնարավորություն են տալիս աշակերտների մոտ

ձևավորել համագործակցային հմտություններ, ինքնուրույն աշխատելու կարողություն և ակտիվ մասնակցություն դասապրոցեսին:

Այսպիսով կատարված աշխատանքից եկա այն համոզման,որ ռուս գրականության դասերը նպաստում է սովորողների զարգացմանը, ինքնուրույն դատողություն անելու կարողությունը, համագործակցային ձևով աշխատելու ունակությունը, ձևավորում է քննադատական մտածողություն, կապակցված խոսք կազմելու, իմացածը վերարտադրելու կարողություն:

Գրականության ցանկ

1. Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ.,Պուրուկուրու Վ., Համագործակցային ուսուցում, Երևան, «Անտարես» հրատ., 2006, 123 էջ:

2. Խաչատրյան Ս. – Ուսուցման արդյունավետ հնարներ.- Եր.: Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020.- 74 էջ:

3. Վարդումյան Ս., Ջաղինյան Ն., Հարությունյան Լ., Գարի Վարելլա, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, «Նոյյան տապան» հրատ., 2005, 402 էջ:

4. https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf (26.07.2022)
5. http://www.irtek.am/views/act.aspx?aid=8359 (25.07.2022)

Հավելված

Դասապլան-1

Ուսուցիչ՝ Արմենուհի Պողոսյան

Առարկա՝	**Ռուսերեն**	**Ամսաթիվ**		**Դասարան**	7
Թեմա՝	**Армения моя. Ключи от Армении**				
Օգտագործվող նյութեր՝	*Գրատախտակ, կավիճ, դասագիրք, տետրեր, թեստեր, բառարան: Նկարներ, Համակարգիչ, Պրոյեկտոր, Թղթերի վրա նախապես գրված բառեր*				
Դասի նպատակը՝	Սովորողները գաղափար կազմեն տվյալ թեմայի հասկացության մասին: Սովորեն և հասկանան նոր բառեր և արտահայտություններ, կատարեն վերլուծություններ, սերմանել և արժևորել հայրենիքի հանդեպ սեր և հարգանք:				
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ				
Վերջնարդյունքները	• Կարողանան հասկանալ նոր բառերը և արտահայտությունները, • Կարողանան վերլուծել նոր հասկացությունները, • Կարողանան վարժ ընթերցել, ճիշտ շեշտադրումով բառերը արտահայտել, • Կարողանան ինքնուրույն վերարտադրել տեքստը միայն ռուսերեն, • Կարողանան ինքնուրույն պատասխանել հարցերին և կազմել այլ հարցեր նոր ձեռքբերած բառապաշարի հիման վրա:				
Գործողություններ(ժամ/տևողություն)	**Ուսումնական գործունեություն** ***Աշակերտներ***	**Ուսումնական գործունեություն** ***Ուսուցիչ***		**Կիրառվող մեթոդ (ներ)**	
	Բացել դասագրքերը,	**Ողջունել դասարանին, ն/բ:**			

5 րոպե-սկիզբ **10 րոպե-ընթացք**	**պատրաստվել նոր դասին:** **Ներկայացնել տնային աշխատանքները** **Պատասխանել հարցերին**	**Ստուգել տնային աշխատանքները, բացատրել անհասկանալի մասերը:** **Տալ հարցադրումներ, աշակերտներին ներգրավել դասապրոցեսին:** **Տալ ուղղորդող հարցադրումներ:**	***Հարցադրումների մեթոդ*** ***Մտագրոհի մեթոդ***
	Բաժանվել խմբերի *Դասի համապատասխան հատվածը սովորել*	**Որից հետո կատարվում է նոր դասի ծանոթություն հարց ու պատասխանի միջոցով:**	***Խմբային*** ***Համագործակցային աշխատանք***
15 րոպե	*Թույլ ունակություն ունեցող աշակերտները կատարում են նոր թեմայի վերաբերյալ տրված առաջադրանքները*	**Դասի ընթացքում անցկացվում է զրույց աշակերտների հետ Հայաստանի առանձին վայրերի և շրջանների հասկացության տակ հավաքագրվում են առանձին մտքեր աշակերտների մեկնաբանությամբ:**	***Տարբերակված ուսուցում***
12 րոպե		**Բաժանել թեստերը, բացատրել հանձնարարությունները** **Հետևել կատարվող աշխատանքներին, տրամադրել**	***Կարճ դասախոսություն՝ստեղծելով միջառարկայական կապ(հայոց լեզու աշխարհագրություն, պատմություն, արվեստ)***

Յրոպե-ավարտ	***Լուռ լսել դասը , կատարել նշումներ, հնչեցնել անհասկանալի հարցեր, աշխատանք դասագրքի հետ***	**անհրաժեշտության դեպքում առաջ մղող անհատական բանվոր, գրավոր հետադարձ կապ:** **Հավաքել տարբերակված թեստերը** **Նոր թեմայի հաղորդում, բանավոր հետադարձ կապի տրամադրում, անհասկանալի հատվածների բացատրություն** **Գնահատում և տնային աշխատանքի հանձնարարում**	***Անրադարձ***
Տնային աշխատանք	*Ինքնուրույն ընթերցել , թարգմանել և պատասխանել դասի վերջի հարցերին:*		

Դասապլան-2

Ուսուցիչ՝ Արմենուհի Պողոսյան

Առարկա՝	**ռուսերեն**	**Ամսաթիվ**		**Դասարան**	7
Թեմա՝	Прямое и переносное значение слова				
Օգտագործվող նյութեր՝	***Գրատախտակ, կավիճ, դասագիրք, տետրեր, թեստեր, բառարան*** ***Նկարներ, Համակարգիչ, Պրոյեկտոր, Թղթերի վրա նախապես գրված բառեր***				
Դասի նպատակը՝	• Բառապաշարի և բանավոր խոսքի զարգացում • Աշակերտները գաղափար կազմեն տվյալ թեմայի մասին, • Կարողանան տարբերակել բառի ուղիղ և փոխաբերական իմաստները, • Կարողանան նախադասությունների մեջ օգտագործել նմանատիպ բառեր և բառակապակցություններ, • Կազմեն թիմային հարցեր թեմայի վերաբրյալ և հարց տալ մյուս թիմերին, • Գործնական աշխատանք. հանձնարարել յուրաքանչյուր զույգին տեքստից դուրս հանել ուղիղ և փոխաբերական իմաստ ունեցող բառերը և գործածել նախադասությունների մեջ:				
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ				
Վերջնարդյունքները	• Կարողանան հասկանալ նոր բառերը և արտահայտությունները, • Կարողանան վերլուծել նոր հասկացությունները • Կարողանան ճիշտ գործածել նմանատիպ բառերը՝ նախադասության կամ խոսքի մեջ, • Կարողանան ինքնուրույն պատասխանել հարցերին և կազմել այլ հարցեր նոր ձեռքբերած բառապաշարի հիման վրա:				
Գործողություններ	**Ուսումնական գործունեություն**	**Ուսումնական գործունեություն**		**Կիրառվող մեթոդ (ներ)**	

ր(ժամ/տևողություն)	*Աշակերտներ*	*Ուսուցիչ*	
4 րոպե-սկիզբ	**Բացել դասագրքերը, պատրաստվել նոր դասին:** **Ներկայացնել տնային աշխատանքները** **Պատասխանել հարցերին** *Գտնում են տարբերությունները:*	**Ողջունել դասարանին, ն/բ:** **Ստուգել տնային աշխատանքները, բացատրել անհասկանալի մասերը** **Գրատախտակին գրվում են նմանատիպ բառեր, որպեսզի աշակերտները կարողանան նշել բառերի իմաստները: Ուսուցչի ուղղորդող հարցերի միջոցով փորձում են պարզել դրանց տարբերությունները:**	***Հարցադրումների մեթոդ***
25 րոպե-ընթացք	*Բաժանվել 2 հոգուց բաղկացած խմբերի* *Աշակերտներին տրամադրված տեքստերից գտնել և ընդգծել ուղիղ և փոխաբերական*	**Որից հետո կատարվում է նոր դասի ծանոթություն հարց ու պատասխանի միջոցով: Աշակերտները նշում են թե ինչ գիտեն թեմայի մասին, հաջորդիվ նշում են, թե ինչ են ցանկանում սովորել:** **Ամբողջ աշխատանքը իրականացվում է ուսուցչի ուղղորդմամբ:**	*ԳՈՒՍ մեթոդ* ***«Սատանի վկա» հնար*** ***Խմբային համագործակցային աշխատանք***

	իմաստ ունեցող բառերը: Նշված բառերով կազմել 2-ական նախադասություն: *Գտնել նման բառեր մյուս խմբերին հարցադրում կատարելու համար:* *Կազմել կարճ դերային երկխոսություններ:* *Ամփոփում*		***Տարբերակված ուսուցում*** ***Կարճ դասախոսություն՝*** ***ստեղծելով միջառարկայական կապ(հայոց լեզու աշխարհագրություն, պատմություն, արվեստ)*** ***Իրավիճակային երկխոսության կազմում*** ***համագործակցային ուսուցում*** ***Ամփոփում***
Գործնական աշխատանք/14 րոպե/ **3 րոպե- ավարտ**		**Ուսուցիչը ներկայացնում է իրավիճակներ, որի շուրջ աշակերտները պետք է կազմեն կարճ դերային երկխոսություն՝ գործածելով վերը նշված նախադասության տեսակները: Օրինակ՝ Դուք ուշացած մտել եք դասարան, կազմեք երկխոսություն: Մի աշակերտը ուսուցիչն է, մյուսը՝ աշակերտ:** **Աշխատանքի արդյունքների հարցում:**	

		Տնային աշխատանքների հանձնարարում:	
Տնային աշխատանք	***Ինքնուրույն ընթերցել , թարգմանել և պատասխանել դասի վերջի հարցերին:***		